ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1941—1945 թթ.)

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1939 թ. օգոստոսի 23-ին կնքված չհարձակվելու երկարաժամկետ (10 տարով) պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու, ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա՝ նպատակ ունենալով զավթել երկիրը և ստեղծել Գերմանական մեծ կայսրություն։

Դեռևս Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ, 1939 թ. օգոստոսի 22-ին, Օբերզալցբուրգում Երրորդ ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին, որ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջեն սլավոնական ժողովուրդներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա. «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»,—իր գեներալներին ոգևորելու համար ցինիկաբար նշել էր Ֆյուրերը[1]։ Ուստի պատահական չէր, որ պատերազմը սկսվելու առաջին իսկ օրվանից, հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու իր գոյությունը, որովհետև նա պարզ գիտակցում էր, թե ինչ վտանգ է սպառնում իրեն, եթե գերմանացիները հաղթեն ռուսներին։ Չէ՞ որ հենց պատերազմի սկզբին Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել 26 սպառազեն դիվիզիա և հարմար պահի էր սպասում այնտեղ ներխուժելու համար[2]։

Պատերազմի առաջին օրերին ամբողջ երկրով մեկ տարածվեցին Բրեստի ամրոցի կայազորի հերոս պաշտպանների անունները։ Հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը նրանք դիմագրավեցին հակառակորդի մի քանի անգամ գերազանցող ուժերին՝ կաշկանդելով նրա առաջխաղացումը։ Բրեստի պաշտպանների մեծ մասը զոհվեց, մի մասին հաջողվեց ճեղքել շրջապատման օղակը և միանալ յուրայիններին, իսկ մի մասն էլ վիրավոր կամ ուժասպառ վիճակում գերվեց թշնամու կողմից։ Ամրոցի խիզախ պաշտպանների թվում կային ավելի քան 200 հայ ռազմիկներ՝ մեծ մասամբ զորակոչված Ղափանի շրջանից։ Նրանց թվում էին Սամվել Մաթևոսյանը, Սոս Նուրիջանյանը, Հրաչիկ Բախշյանը, Թավադի Բաղդասարյանը, Լալազար Թադևոսյանը, Վահան Գրիգորյանը, Անդրանիկ Մինասյանը և ուրիշներ։

Արևմտյան ռազմաճակատում պատերազմի առաջին օրերին իր սխրանքներով աչքի ընկավ 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանը։ Նա մեկ շաբաթ շարունակ Բրեստի շրջանում դիմակայում էր հակառակորդի մեծաթիվ ուժերին՝ ծանր կորուստներ պատճառելով նրան։ Մարտերից մեկում գեներալ Ալավերդյանը ծանր վիրավորվեց և գերվեց։ Սակայն գերության մեջ անգամ չընկճվեց նրա ոգին, և գեներալը մերժեց թշնամու առաջարկը՝ ծառայել հիտլերյան բանակում։ Դեռ ավելին, Համելբուրգի համակենտրոնացման ճամբարում

---

[1] The New York Times, 24. XI. 1945, p. 7.

[2] *Տես Ս. Մ. Շտեմենկո, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք I, Երևան, 1970, էջ 69։*

նա ստեղծում է խորհրդային ռազմագերիների ընդհատակյա կազմակերպություն և ձախողում ռազմագերիներին ազգային լեգեոնների մեջ հավաքագրելու փորձերը։ 1942 թ. ապրիլին անընկճելի գեներալը գնդակահարվում է Նյուրնբերգի բանտում։

Պատերազմի առաջին օրը թշնամու գերազանց ուժերը հետ մղելիս հերոսաբար զոհվեց 6-րդ հեծյալ դիվիզիայի 94-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ Նիկոլայ Պետրոսյանցը (Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Սարդարաշեն գյուղից)։ Նա աչքի էր ընկել 1-ին հեծյալ բանակի, ապա Մոնղոլիայի զինված ուժերի կազմում, 1939 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին մասնակցել Հեռավոր արևելքում ճապոնական սամուրայների դեմ մղված մարտերին, պարգևատրվել Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «ԲԳԿԲ 20 տարին» մեդալով[3]։

Մի քանի հազար հայեր էին ծառայում Հարավ-արևմտյան ռազմաճակատի զորամիավորումների շարքերում, որոնք մարտական գործողությունների առաջին իսկ օրերից աչքի ընկան իրենց սխրանքներով։ Հունիսի 22-ին, թշնամու «Յունկերս-88» ինքնաթիռ խփեց 8-րդ տանկային դիվիզիայի 8-րդ հրետանային-զենիթային դիվիզիոնի հաշվարկի նշանառու, եֆրեյտոր Ավետիս Աղայանը (Խանլարի շրջանի Ջագլիկ գյուղից), որի համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[4]։ Մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար ռազմաճակատում առաջինների թվում Լենինի շքանշանով պարգևատրվեցին 12-րդ տանկային բրիգադի 12-րդ առանձին հետախուզական վաշտի ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Արամայիս Քոսոյանը (Երևանից), 199-րդ հրաձգային դիվիզիայի 492-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Սարգիս Ռաշոյանը (Լենինականից), Կարմիր դրոշի շքանշաններով՝ ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետ, գեներալ-մայոր Հովհաննես Բաղրամյանը, ռազմաճակատի հրետանու պետ, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը, ռազմաճակատի քաղվարչության պետ, դիվիզիոնային կոմիսար Սերգեյ Գալաջևը, 216-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատար Աշոտ Սարգսյանը (հետմահու), 49-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար, գնդապետ Տիմոֆեյ Դեդեօղլյանը, 275-րդ հրաձգային դիվիզիայի 982-րդ հրաձգային գնդի հրամանատար, փոխգնդապետ Արշավիր Շահնազարովը, 47-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 206-րդ թեթև հրետանային գնդի դիվիզիոնի հրամանատար, կապիտան Հաբեթնակ Սաֆարյանը և շատ ուրիշներ[5]։

Հազարավոր հայեր էին ծառայում Հարավային ռազմաճակատում, որտեղ իրենց սխրանքներով աչքի ընկան ռազմաճակատի հրետանու շտաբի պետ, գնդապետ Իվան Վեքիլովը, 12-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը, ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ, 1-ին կարգի զինվորական բժիշկ Ալեքսանդր Հարությունյանը, 99-րդ հրաձգային դիվիզիայի 197-րդ հրաձգային գնդի դպրոցի պետ, կապիտան Մաթևոս Մադաթյանը և շատ ուրիշներ։

1941 թ. հուլիսի 17-ին Սեստրինովկայի շրջանում տեղի ունեցած մարտերում հակառակորդի 30 տանկերից ու 40 ավտոմեքենաներից բաղկացած զորասյան հետ մենամարտում հաղթող դուրս եկավ 99-րդ հրաձգային դիվիզիայի 473-րդ հրետանային գնդի 1-ին մարտկոցի հրանոթի հրամանատար, կրտսեր սերժանտ Մուշեղ Ստեփանի Բալայանը, որն անձամբ խփեց ֆաշիստական 12 տանկ և պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[6]։ Դա

[3] Центральный архив Министерства обороны РФ (այսուհետև՝ ЦАМО РФ), личное дело подполковника Н. Г. Петросяна, № 529094. А. Н. Гервасиев, Версты победы, Кишинев, 1975, с. 6.

[4] Նույն տեղում, ֆ. 33, ց. 682524, գ. 475, թ. 207։

[5] Նույն տեղում, գ. 129, թ. 226, գ. 434, թ. 82, գ. 419, թ. 9, գ. 427, թ. 43, գ. 1006, թ. 177, ց. 682523, գ. 36, թ. 83։

[6] Նույն տեղում, ց. 682524, գ. 521, թ. 34։

պատերազմի առաջին շրջանի պատմության մեջ աննախադեպ երևույթ էր, որն առ այսօր չի լուսաբանվել։ Հարավային ռազմաճակատում հայ քաջորդիներից առաջիններից մեկը Լենինի շքանշանի արժանացավ 30-րդ հրաձգային դիվիզիայի 59-րդ թեթև հրետանային գնդի 4-րդ ականանետային մարտկոցի հրամանատար, լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ)[7]։ Հարավային ռազմաճակատում ցուցաբերած սխրանքների համար Լենինի շքանշանով պարգևատրվեցին նաև 12-րդ բանակի 11-րդ զրահագնացքի 2-րդ զրահադիվիզիոնի գլխավոր հրանոթի փականակավար Լևոն Գրիգորյանը (Սևանի շրջանի Գեղամավան գյուղից)[8], 152-րդ տանկային բրիգադի մոտոհրաձգային գումարտակի ջոկի հրամանատար, սերժանտ Խաչատուր Բեկնազարյանը (Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանից)[9], 136-րդ հրաձգային (հետագայում 15-րդ գվարդիական) դիվիզիայի 291-րդ հրետանային գնդի կրակային դասակի հրամանատար, լեյտենանտ Բաբկեն Մանուկյանը (Աշոցքի շրջանի Աշոցք գյուղից)[10]։ Հակառակորդի 30 տանկ ոչնչացրեց լեյտենանտ Սերգեյ Օգանովի հրետանային մարտկոցը՝ փակելով թշնամու ճանապարհը դեպի Դոնի Ռոստով։ Խիզախ հրետանավորը հետմահու արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման[11]։ Այդ բարձր կոչմանը հետմահու արժանացավ նաև լեյտենանտ Խաչատուր Մելիքյանը (Խանլարի շրջանի Ջագլիկ գյուղից)[12]։

Պատերազմի առաջին իսկ օրը Հայաստանի կուսակցական և պետական մարմինները, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեները, հանրապետական, քաղաքային և շրջանային զինվորական կոմիսարիատները անմիջապես լծվեցին հանրապետության ռազմական կարողության մոբիլիզացիոն աշխատանքներին։ Հանրապետության առջև դրվեցին անհետաձգելի խնդիրներ՝ ամբողջ աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով, ապահովել զորահավաքը, կադրեր ընտրել ճակատ մեկնածներին փոխարինելու և թիկունքի աշխատանքն անխափան շարունակելու համար, ծավալել բնակչության ռազմական ուսուցումը, ժողովրդական աշխարհազորի կազմավորումը, սահմանամերձ շրջաններում պաշտպանական ամրությունների կառուցումը և այլն։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հունիսի 22-ի՝ զինապարտների մասին հրամանագրի համաձայն բանակ էին զորակոչվում 1905—1918 թթ. ծնված զինապարտները։ Հունիսի 23-ից հանրապետությունում սկսվեցին մասսայական զորահավաքի աշխատանքները։ Հատուկ կարևորություն էր ստացել մանավանդ ազգային դիվիզիաների կազմավորումը, որը Հայաստանում կատարվեց ժամանակին և հաջողությամբ։ Կարճ ժամանակամիջոցում հանրապետության տարածքում ձևավորվեցին Հայկական 89-րդ, 408-րդ, 409-րդ և 261-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերը գերազանցապես համալրված էին հայերով։

Ավելի վաղ՝ 1920—1922 թթ. Հայաստանում կազմավորված Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը 1938—1940 թթ. վերակազմավորվել էր որպես ոչ ազգային միավորում, 1941 թ. հունիսի 22—հուլիսի 22-ը[13] համալրվելով հանրապետության մարդկային և նյութական միջոցների հաշվին, կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը և սեպտեմբերին մեկնեց ռազմաճակատ։

---

7 Նույն տեղում, գ. 484, թ. 33։

8 Նույն տեղում, գ. 523, թ. 65։

9 Նույն տեղում, գ. 517, թ. 153։

10 Նույն տեղում, գ. 519, թ. 251։

11 Նույն տեղում, ց. 793756, գ. 35, թ. 63—64։

12 Նույն տեղում, գ. 31, թ. 32—34։

13 Նույն տեղում, ֆ. 151-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 2, թ. 1—3։

Հայկական այս 5 դիվիզիաները միասին իրենց շարքերում ունեին 62521 մարդ, որից 58062-ը՝ հայ։ Թվով վեցերորդը՝ 390-րդ հրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Վրաստանի Ջուգդիդի և Փոթի քաղաքներում որպես ոչ ազգային զորամիավորում[14]։ 1942 թ. փետրվար-մարտ ամիսներին այն վերակազմավորվեց որպես հայկական դիվիզիա[15]։

Բացի ազգային զորամիավորումներից Հայաստանում կազմավորվեցին կամ համալրվեցին 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերի զգալի մասը պատերազմի առաջին շրջանում դարձյալ հայեր էին։

Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում հանրապետությունում հսկայական աշխատանք կատարվեց արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ռազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու, ռազմաճակատի կարիքների համար զենքի ու զինամթերքի թողարկումը յուրացնելու, գործող բանակի համար տաք հագուստ արտադրելու և հավաքելու ուղղությամբ։ Պատերազմի տարիների շահագործման հանձնվեց արդյունաբերական 30 նոր ձեռնարկություն[16], որոնց թվում՝ ավիացիոն, կոմպրեսորների, ժամացույցի, շարժիչավերանորոգման, ավտոդղերի և այլն։ Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր տեսակի առարկաների արտադրությունը, այդ թվում՝ 10 տեսակի ռազմամթերքի, ականանետների, ականների, նռնակների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քլորոֆորմի արտադրությունը[17]։ 1942 թ. հոկտեմբերից Երևանի թիվ 447 գործարանը (այժմ՝ Հայէլեկտրամեքենաշինական գործարան) սկսեց նորոգել վնասված ինքնաթիռներ։ Այնուհետև սկսեց արտադրել «Յակ-3» կործանիչ ինքնաթիռների թևեր ու շասի, որոնք ուղարկվում էին Թբիլիսի, որտեղ և հավաքվում էր վերջնական արտադրանքը։ Պատերազմի հաղթական ավարտի շրջանում գործարանը սկսեց արտադրել «ՈւՏ-2Մ» թեթև ինքնաթիռներ[18]։ Գյուղատնտեսության աշխատողների ջանքերով ամբողջ պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով աճեց։ Դեռ ավելին, գյուղատնտեսական ավանդական կուլտուրաների հետ միասին սկսեցին արտադրել մեծ քանակությամբ նոր տեխնիկական կուլտուրաներ՝ ծխախոտ, ճակնդեղ, ինչպես նաև կարտոֆիլ։ Մեծ չափով ավելացվեցին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները, որը հնարավորություն տվեց հացի ներմուծումը հասցնել նվազագույն չափերի։ Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ոչ միայն չնվազեց անասունների գլխաքանակը, այլև Կարմիր բանակի՝ մսի՝ ֆոնդը մուծելու պլանները կատարելուն զուգընթաց աճեց դրանց թիվը։ Տարեկան արտադրվում էր 7500 տոննա միս, երշիկ, 3000 տոննա ծխախոտ, 40 հազար դեկալիտր կոնյակ, 600 հազար դեկալիտր գինի և այլն[19]։

Այսպիսով, պատերազմի առաջին իսկ օրերից սկսած մինչև նրա հաղթական ավարտը հանրապետությունը վերածվել էր իսկական ռազմական ճամբարի, խորհրդային բանակի մարտական զինանոցի, որտեղ «Ամեն ինչ

---

14 ЦАМО РФ, ф. 56. оп. 12214. д. 982. л. 3—11 (կազմավորման շրջանում դիվիզիայի շարքերում կային 1812 հայեր)։

15 Նույն տեղում, ֆ. Ղրիմի ռազմաճակատի, ց. 1199, գ. 3, թթ. 289—294։

16 Հայաստանի Հանրապետության նոտարական պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 113, ց. 8, գ. 11, թթ. 38, 39։

17 Նույն տեղում, ց. 33, գ. 5, թթ. 3—34։

18 Նույն տեղում, ֆ. 313, ց. 1, գ. 8, թ. 104։

19 Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին 1941—1945 թթ. (փաստաթղթերի ու նյութերի ժողովածու), Երևան, 1975, էջ 310։

ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ գնացքներով ռազմաճակատ էին ուղարկվում զենք, զինամթերք, հագուստեղեն, սնունդ, մարդկային համալրումներ։ Ռազմաճակատում մարտընչող հայ ժողովրդի զավակները մարտերի ամենածանր պահերին մշտապես զգում էին թիկունքի աշխատավորության աջակցությունը, ստանում նրա ինչպես նյութական, այնպես էլ բարոյական օգնությունը։

Հայ ռազմիկները, սպաները ու գեներալները ակտիվորեն մասնակցեցին պատերազմի առաջին շրջանի բոլոր կարևոր մարտական գործողություններին։

1941 թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942 թ. ապրիլի 24-ը տեղի ունեցավ Հայրենական մեծ պատերազմի ամենանշանավոր ճակատամարտերից մեկը՝ Մոսկվայի համար մղված ճակատամարտը։ Պաշտպանական և հարձակողական գործողությունների ընթացքում Կարմիր բանակի զորքերը ոչ միայն կասեցրին ֆաշիստական «Կենտրոն» բանակային զորախմբի առաջխաղացումը Մոսկվայի մատույցներում, այլև հզոր հակահարվածով նրան հետ շպրտեցին 100—250 կմ դեպի արևմուտք։ Այդ հաղթանակը հող նախապատրաստեց պատերազմում արմատական բեկում ստեղծելու համար, ցրեց գերմանաֆաշիստական բանակների անխոցելության մասին առասպելները, նպաստեց հակահիտլերյան դաշինքի ամրապնդմանը, ինչպես նաև լուրջ նախազգուշացում հանդիսացավ Ճապոնիայի և Թուրքիայի կառավարող շրջաններին՝ ձեռնպահ մնալու ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու մտքից։

Մոսկվայի ճակատամարտին՝ Արևմտյան, Ռեզերվային, Բրյանսկի, Կալինինի ռազմաճակատների, ինչպես նաև Հարավ-արևմտյան ռազմաճակատի աջ թևի զորքերի կազմում մասնակցեցին մի քանի հազար հայորդիներ։ Դասից թվում էր գեներալ-մայոր Հովհաննես Բաղրամյանը, որը լինելով Հարավ-արևմտյան ռազմաճակատի աջ թևի միավորումներից ստեղծված օպերատիվ-շարժական զորախմբի շտաբի պետը, զորախմբի հրամանատար գեներալ Կուզնեցովի հետ միասին անհամեմատ կարճ ժամանակամիջոցում և ձմեռային սառնամանիքների պայմաններում կազմակերպում և փայլուն կերպով իրականացնում է Մոսկվայի ճակատամարտի բաղկացուցիչ մասը կազմող Ելեցյան հարձակողական գործողությունը (1941 թ. դեկտեմբերի 6—16)[20].

Մոսկվայից հարավ-արևմուտք ընկած Նարոֆոմինսկ քաղաքի ուղղությամբ տեղի ունեցած մարտերում հմտորեն էր կազմակերպում Արևմտյան ռազմաճակատի 33-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի աշխատանքները գնդապետ Ստեփան Կինոսյանը։ Այս բանակի զորամիավորումները դեկտեմբերի 26-ին հակառակորդին դուրս շպրտեցին Նարոֆոմինսկից[21]։ Մարտավարական գերազանց ունակություններ ցուցաբերելու համար գնդապետ Կինոսյանը 1942 թ. հունվարի 23-ին պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Շուտով նրան շնորհվում է նաև գեներալ-մայորի կոչում։

Մոսկվայի ճակատամարտում իրենց զորավարական տաղանդով աչքի ընկան դիվիզիաների հրամանատարներ՝ փոխգնդապետ Սարգիս Մարտիրոսյանը և գնդապետ Հայկ Մարտիրոսյանը։ Փոխգնդապետ Սարգիս Մարտիրոսյանի 340-րդ հրաձգային դիվիզիան հատկապես աչքի ընկավ Տուլայի մոտ՝ հակառակորդի Լապտևյան խմբավորման ջախջախման մարտերում։ Դիվիզիայի ղեկավարությունը հմտորեն իրագործելու և մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար փոխգնդապետ Ս. Մարտիրոսյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[22]։ Նրան շնորհվեց նաև գնդապետի, իսկ ավելի ուշ՝ գեներալ-մայորի կոչում։

---

20 Советская военная энциклопедия, т. 3, М., 1977, с. 307.

21 Освобождение городов, М., 1985, с. 163—164.

22 ЦАМО РФ. ф. 33, оп. 682524, д. 7, л. 196.

Մոսկվայի ճակատամարտում իրենց սխրանքներով աչքի ընկան հրետանային գնդի հրամանատար, մայոր Հայկ Ղազարյանը, աշխարհազորայիններ Հովհաննես Ալիբեկյանը, Գրիգոր Կուլոզլյանը և շատ ուրիշներ հերոսաբար զոհվեցին՝ իրենց արժանի ավանդը ներդնելով Ռուսաստանի մայր քաղաքի պաշտպանության գործում[28]։

Թշնամին, անհաջողության մատնվելով Մոսկվայի մոտ, հիմնական հարվածն ուղղեց հարավային և հարավ-արևելյան ուղղություններով՝ դեպի Ղրիմ, Կովկաս, Ստալինգրադ։ 1942 թ. հուլիսի 17-ից մինչև 1943 թ. փետրվարի 2-ը Դոն գետի մեծ ելուստի և Վոլգայի միջև ընկած շրջանում տեղի է ունենում Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցող Ստալինգրադյան ճակատամարտը, որն ավարտվում է գերմանական զորքերի ռազմավարական խմբավորումների շրջապատումով և լրիվ ջախջախումով։ Ֆաշիստական խմբավորման պարտությունը Ստալինգրադի տակ ցնցեց ողջ ֆաշիստական Գերմանիայի հիմքերը, խարխլեց նրա նկատմամբ դաշնակից երկրների վստահությունը, նպաստեց ֆաշիստական Գերմանիայի գրավված երկրներում Դիմադրության շարժման աշխուժացմանը։ Ճապոնիան ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել ԽՍՀՄ-ի նկատմամբ ակտիվ գործողությունների դնելու պլաններից։ Թուրքիայում ուժեղացան չեզոքություն պահպանելու ձգտումները։ Հայ ժողովրդի զավակներից սի՛ք քանի հազար մարդ մարտերում կատարած սխրանքների համար արժանացան կառավարական բազմապիսի պարգևների, իսկ 17-րդ օդային բանակի 288-րդ կործանիչ ավիացիոն դիվիզիայի 866-րդ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի հրամանատար, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[24]։

Ճակատամարտի առաջին օրերին իր սխրանքներով աչքի ընկավ 63-րդ բանակի 14-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 36-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի մայոր Մաթևոս Մադաթյանը՝ արժանանալով Լենինի շքանշանի[25]։ Լենինի շքանշանի արժանացավ նաև 133-րդ տանկային բրիգադի կոմիսար, ավագ գումարտակային կոմիսար Գրիգոր Կալուստովը, Ստալինգրադի մատույցներում նրա բրիգադը խփեց հակառակորդի 218 տանկ[26]։ Նման պարգևի (հետմահու) արժանացավ 64-րդ բանակի 138-րդ հրաձգային դիվիզիայի 295-րդ հրետանային գնդի 3-րդ մարտկոցի հրանոթի հրամանատար, սերժանտ Կոստյա Վարդևանյանը (Թումանյանի շրջանի Աքորի գյուղից)[27]։

Ստալինգրադյան ճակատամարտի սկզբից մինչև վերջ մասնակցություն ունեցավ 76-րդ հրաձգային (նախկին Հայկական) դիվիզիան, որը մարտերում ցուցաբերած խիզախության համար 1942 թ. նոյեմբերի 23-ին վերակազմավորվեց որպես գվարդիական զորամիավորում և այնուհետև կոչվեց 51-րդ Գվարդիական հրաձգային դիվիզիա։ Դիվիզիան պարգևատրվեց նաև Լենինի շքանշանով[28]։

Ստալինգրադի ճակատամարտին ակտիվորեն մասնակցեցին Դոնի ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ Գալաջևը, հրետանու մարշալ Վորոնովի օպերատիվ խմբի անդամ, հրետանու գեներալ-մայոր Իվան Վեքիլովը, 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Հայկ Թումանյանը, 80-րդ գվարդիական հրաձգային

---

28 Ա. Ն. Մնացականյան, Միասնական շարքերում, Երևան, 1975, էջ 137—140։

24 ЦАМО РФ. ф. 33. оп. 793756. д. 7. л. 159—160.

25 Նույն տեղում, ֆ. Ստալինգրադյան ռազմաճակատի, ց. 228, գ. 41, թ. 26։

26 Նույն տեղում, ց. 682524, գ. 271, թ. 17։

27 Նույն տեղում, ֆ. 33, ց. 682525, գ. 164, թ. 97։

28 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Կ. Ա. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Երևան, 1980, էջ 42—65։

դիվիզիայի (նախկին 298-րդ) շտաբի պետ, փոխգնդապետ Քրիստափոր Ջելաուխովը, 61-րդ հեծյալ դիվիզիայի 219-րդ հեծյալ գնդի հրամանատար, մայոր Արտեմ Հակոբյանը և շատ ուրիշներ[29]։

Դեռևս Վոլգայի և Դոնի միջև ընկած տափաստաններում ծավալված ճակատամարտից առաջ գերմանաֆաշիստական «Հարավ» զորախմբի աջ թևի զորքերին հաջողվել էր 1942 թ. մայիսի վերջերին գրավել Կերչ, իսկ հուլիսի սկզբին՝ Ղրիմ թերակղզիները։ Այնուհետև, Ստալինգրադյան ճակատամարտի սկսվելուց մի քանի օր անց՝ հուլիսի 24-ին, նրանք գրավում են Դոնի Ռոստովը, որը համարվում էր Կովկասի դռնաշին։ Դրանից հետո գերմանաֆաշիստական հրամանատարությունն իր զորքերի մի զգալի մասը նետեց դեպի Կովկաս՝ նպատակ ունենալով գրավել երկրամասի հացառատ շրջանները, Կասպից ծովի առափնյա նավթահանքերը, այնուհետև թափանցել Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ։ Ճակատամարտը Կովկասի համար սկսվեց 1942 թ. հուլիսի 27-ին և շարունակվեց մինչև 1943 թ. հոկտեմբերի 9-ը։ Այն ավարտվեց գերմանաֆաշիստական հրամանատարության պլանների լրիվ ձախողմամբ։ Թշնամին ջախջախվեց և դուրս շպրտվեց Կովկասից։ 1943 թ. փետրվարի 14-ին ազատագրվեց Դոնի Ռոստովը, իսկ հոկտեմբերի 9-ին՝ Թամանյան թերակղզին։ Ճանապարհը դեպի Ղրիմ և Ուկրաինա ազատ էր։

Կովկասի ճակատամարտին ամենազորեղ մասնակցությունն ունեցան հայ ժողովրդի զավակները։ Նրանց զգալի մասը մարտնչում էր Հայկական 89-րդ, 408-րդ և 409-րդ հրաձգային դիվիզիաների կազմում։ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան մարտերի մեջ մտավ 1942 թ. սեպտեմբերի 26-ին, Գրոզնու մատույցներում՝ Թերեք գետի աջ ափին։ 1943 թ. հունվարի 2-ին նրա զորամասերը ազատագրում են Մալգոբեկ քաղաքը և մարտերով առաջանում Գեորգիևսկ, Միներալնիե Վոդի, Ստավրոպոլ, Տիխորեցկ, Գարբուզովայա Բալկա, Նովո-Ջիրելիևկա, փետրվարի վերջերին հասնում Աղովի ծովի ափին գտնվող Եյսկ քաղաքը։ Այնուհետև, սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիվիզիան հարձակողական մարտերում ճեղքում է հակառակորդի ամրակուռ պաշտպանական գիծը, որը բաղկացած էր 7 շերտից, թշնամուն դուրս շպրտում Թամանի թերակղզուց, 1943 թ. հոկտեմբերի 9-ին արժանանում Թամանյան պատվավոր անվան։ Դիվիզիայի անձնակազմից երեք հոգու՝ 390-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային վաշտի դասակի հրամանատար, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանին, 526-րդ հրաձգային գնդի 1-ին գնդացրային վաշտի ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանին և 280-րդ առանձին սակրային գումարտակի ջոկի հրամանատար, շարքային Ջահան Կարախանյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում[30]։ Դիվիզիայի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար հրամանատար, գնդապետ Նվեր Սաֆարյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում։

1942 թ. դեկտեմբերի 8-ից մինչև 1943 թ. ապրիլ Թերեքի ափերից մարտերով մինչև Կուբանի ափերը հասավ Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան՝ ազատագրելով Չեչեն-Ինգուշական Ինքնավար Հանրապետության, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերի բազմաթիվ քաղաքներ, գյուղեր ու բնակավայրեր»[31]։

---

29 Ստալինգրադյան ճակատամարտում հայ ժողովրդի զավակների կատարած սխրանքների մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Ա. Գրիգորյան, Դրվագներ Ստալինգրադյան հերոսամարտերից, Երևան, 1979։

30 ЦАМО РФ, ф. 33, оп. 793756, д. 1, л. 125; д. 3, л. 11, д. 20, л. 264. Հունան Ավետիսյանի անունը առհավետ գրանցվեց այն ստորաբաժանման անձնակազմի ցուցակում, որտեղ նա ծառայել է։

31 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, մաս 1-ին, Երևան, 1980։

1942 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Նովոռոսիյսկի, ապա Տուապսեի շրջանում տեղի ունեցած դաժան մարտերում Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը մեծ զոհերի գնով կանգնեցրին հակառակորդի զորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս և իրենց արժանի վարկը ներդրեցին Կովկասի ճակատամարտում[32]։ Կովկասի ճակատամարտում ցուցաբերած քաջության համար խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան 4-րդ օդային բանակի 230-րդ գրոհային ավիացիոն դիվիզիայի 805-րդ գրոհային ավիագնդի էսկադրիլիայի հրամանատար, կապիտան Սամսոն Մկրտումյանը և 159-րդ առանձին հրաձգային բրիգադի 3-րդ առանձին գումարտակի հրամանատար, ավագ-լեյտենանտ Ղուկաս Մագոյանը[33]։ Լենինի շքանշանով պարգևատրվեցին 151-րդ հրաձգային դիվիզիայի 570-րդ առանձին սակրային գումարտակի սակրավոր, եֆրեյտոր Մեսրոպ Ղազարովը[34], որն իր կյանքի գնով պայթեցրեց թերեք գետի կամուրջը և փակեց թշնամու տանկերի ճանապարհը և նույն դիվիզիայի 379-րդ լեռնահրաձգային գնդի 5-րդ վաշտի հրամանատար, լեյտենանտ Կարո Համբարձյանը[35]։

Կովկասի ճակատամարտին ակտիվորեն մասնակցեցին Կովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը, որը մարտերից մեկում ծանր վիրավորվեց և զրկվեց մեկ ոտից, «Սևաստոպոլ» գծանավի ծանր հրանոթի հրամանատար Միհրան Պետրոսյանը (հետագայում՝ փոխծովակալ), Անդրկովկասյան ռազմաճակատի հակաօդային պաշտպանության ուժերի շտաբի պետ, գնդապետ Գևորգ Չայլախյանը (հետագայում հրետանու գեներալ-մայոր), բրիգադի հրամանատար, գնդապետ Սմբատ Դանիելյանը, հեծյալ գնդի հրամանատար, գնդապետ Մուշեղ Կարապետյանը, հրաձգային գնդի հրամանատար, գնդապետ Գրիգոր Բլբոսյանը, օդաչուներ Վարդգես Վարդանյանը, Հակոբ Մանուկյանը, Վազգեն Օգանեզովը, պահակային զրահանավակի հրամանատար, ավագ լեյտենանտ Միքայել Սահակյանը և շատ ուրիշներ[36]։

Հայ ռազմիկները ակտիվ մասնակցություն ունեցան նաև Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցող ճակատամարտերից մեկին՝ Օրյոլ-Կուրսկ-Բելգորոդի շրջանում 1943 թ. հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը տեղի ունեցած հերոսամարտերին։ Կուրսկի ճակատամարտում ոչ միայն ամբողջովին չախջախվեցին հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից (այդ թվում 8 տանկային) բաղկացած զորախմբավորումները, այլև ընդմիշտ թաղվեց գեբելսյան ստահոդ քարոզչության ստեղծած այն առասպելը, որ խորհրդային զորքերն ընդունակ են միայն ամառային պայմաններում հաղթելու։ Կուրսկի աղեղում կրած պարտության հետևանքով լիովին կործանվեց գերմանաֆաշիստական բանակի հարձակողական ռազմավարությունը. գերմանական բանակը ստիպված էր ամբողջ հարկատով մեկ անցնել պաշտպանության։ Ռազմավարական նախաձեռնու-

---

32 Ավելի մանրամասն տե՛ս Ա. Մ. Սարգսյան, Այրվող անտառ, Երևան, 1965։ Նույնի՝ 408-я армянская стрелковая дивизия в битве за Кавказ, Ереван, 1985. Ա. Մ. Հակոբյան, Հերոսական մարտերում, Երևան, 1975, էջ 1—62։

33 ЦАМО РФ. ф. 33. оп. 793756. д. 32. л. 10—11; д. 29. л. 3 Սամսոն Մկրտումյանը Կովկասի ճակատամարտում հերոսի կոչման արժանացած առաջին հայորդին էր (1942 թ. գեկտեմբերի 13)։

34 ЦАМО РФ, ф. Закавказского фронта, оп. 995, д. 286, л. 102. ф. 33, оп. 682525, л. 12. л. 152 (Մեսրոպ Ղազարովի անունն առհավետ գրանցվել է այն ստորաբաժանման անձնակազմի ցուցակում, որտեղ նա ծառայել է)։

35 Նույն տեղում, ֆ. 33, ց. 682524, գ. 617, թ. 466։

36 Տե՛ս Ք. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, Երևան, 1971։

թյունն ամբողջովին իր ձեռքը վերցնելով՝ խորհրդային հրամանատարությունը հնարավորություն ստացավ զարգացնելու ռազմավարական հարձակումը տարբեր ճակատներում։ Կուրսկի տակ տարած հաղթանակով և խորհրդային զորքերի՝ Դնեպրի ափերը հասնելով ավարտվեց պատերազմում արմատական բեկումը։

Կուրսկի ճակատամարտին ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին մասնակցեցին մի քանի հազար հայորդիներ։ Նրանցից երկուսին՝ 11-րդ գվարդիական առանձին տանկային բրիգադի հրամանատարի քաղգծով տեղակալ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Գալստյանին (Կալուստով) և 11-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 27-րդ գվարդիական հրաձգային գնդի 9-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Հովհաննիսյանին (Իոնիսյան) շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվեց Օրյոլյան գործողության հաղթանակում վճռական դեր կատարած 11-րդ Գվարդիական բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյանը. նրան շնորհվեց նաև գեներալ-գնդապետի կոչում։ Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվեց և ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման արժանացավ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ և ռազմաօդային ուժերի շտաբի պետ Արմենակ Խուդյակովը (Սերգեյ Խուդյակով), որը ճակատամարտի օրերին Գերագույն գլխավոր հրամանատարության հանձնարարությամբ կոորդինացնում էր 2-րդ և 5-րդ օդային բանակների գործողությունները։ Ճակատամարտի օրերին կատարած սխրանքների համար Լենինի շքանշանով պարգևատրվեցին 3 հայ խիզախներ՝ 181-րդ տանկային բրիգադի 1-ին տանկային գումարտակի հրամանատար, մայոր Եփրեմ Ղարիբյանը (Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղից), որը հատկապես աչքի ընկավ հուլիսի 12-ին Պրոխորովկայի մոտ տեղի ունեցած տանկային ճակատամարտում[87], 67-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 138-րդ գվարդիական հրետանային գնդի հակատանկային հրանոթի հաշվարկի հրամանատար, գվարդիայի եֆրեյտոր Խաչիկ Մելիքսեթյանը (Ապարանի շրջանի Նորաշեն գյուղից), որը հուլիսի 4—7-ը տեղի ունեցած մարտերում ոչնչացրեց հակառակորդի 7 տանկ[88] և 19-րդ գվարդիական տանկային բրիգադի 2-րդ տանկային գումարտակի «S-34» միջին տանկերի դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Թովմաս Զոբանյանը, որը տանկային մենամարտում խփեց հակառակորդի 4 տանկ[89]։

Կուրսկի ճակատամարտում իրենց մարտավարական ունակություններով աչքի ընկան 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը, 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, 44-րդ ծանր թնդանոթային-հրետանային բրիգադի հրամանատար, գնդապետ Ռաֆայել Հայրապետովը, 3-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ Համազասպ Բաբաջանյանը, 3-րդ բանակի շտաբի հետախուզական բաժնի պետ, փոխգնդապետ Նիկողայոս Թումանյանը, 32-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատարի շարային գծով տեղակալ, գնդապետ Լևոն Դաբրինյանը (հետագայում Խորհրդային Միության հերոս), 112-րդ տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Սանասար Ոպյանը, 340-րդ հրաձգային դիվիզիայի 1142-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Աշոտ Ալեքովը, 7-րդ

---

37 ЦАМО РФ, ф. V гвардейской танковой армии, оп. 4985, д. 20, л. 19.

38 *Հ. Մելիքսեթյան, Մ. Սահակյան, Փառքի շքանշանի ասպետները, Երևան, 1982, էջ 68—75։*

39 ЦАМО РФ, ф. 33, оп. 686043, д. 5, л. 311 *(Թ. Ա. Զոբանյանը ծնվել է 1921 թ. Դոնի Ռոստովի Մեծ Սալի հայկական գյուղում)։*

գվարդիական օդադեսանտային բրիգադի 18-րդ գվարդիական օդադեսանտային գնդի հրամանատար, գվարդիայի գնդապետ Զաքար Դերձյանը և ուրիշներ՝ արժանանալով կառավարական բազմապիսի պարգևների։

Ստալինգրադի, Կուրսկի և Կովկասի ճակատամարտերում տարած հաղթանակներից հետո խորհրդային զինված ուժերը 1943 թ. օգոստոսի վերջերից մարտական մի շարք գործողություններ սկսեցին Ուկրաինան ազատագրելու համար։

Ուկրաինայի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցեցին մի քանի հազար հայ զինվորներ, սպաներ ու գեներալներ։ Մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 41 հայերի շնորհվեց Խորհրդային Միության Հերոսի կոչում։ Նրանցից 18 հոգի այդ բարձր կոչմանն արժանացան Դնեպրը հաղթահարելու համար։

Ուկրաինայի ազատագրման տարեգրության մեջ էական ավանդ ունեցավ 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը։ Նրա կորպուսի դիվիզիաները 3-րդ գվարդիական տանկային բանակի զորամասերի աջակցությամբ 1943 թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում մտան Կիև և գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին Ուկրաինայի մայրաքաղաքը։ Գեներալ Մարտիրոսյանը՝ որպես Կիևն առաջինն ազատագրող զորքերի հրամանատար, ռուսական բանակում ավանդաբար գոյություն ունեցող կարգի համաձայն, նշանակվեց քաղաքի կայազորի պետ և պարգևատրվեց Լենինի շքանշանով[40]։ Ուկրաինայի ազատագրման մարտերում ցուցաբերած արիության և հերոսության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան 1-ին տանկային բանակի 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի հրամանատար, գվարդիայի գնդապետ Համազասպ Բաբաջանյանը, 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, 315-րդ հրաձգային դիվիզիայի շտաբային գծով տեղակալ, գնդապետ Ասքանազ Կարապետյանը, 69-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ Լեոն Դարբինյանը[41], նույն բրիգադի մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, կապիտան Գարեգին Բալայանը, որը զոհվեց Դնեպրի աջ ափին հենակետ գրավելու մարտերում, և հետմահու նրա անունը առհավետ գրանցվեց նույն բրիգադի 1-ին մոտոհրաձգային վաշտի անձնակազմի ցուցակում[42], 73-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 209-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Գեդեոն Միքայելյանը, 503-րդ գրոհային ավիացիայի էսկադրիլիայի հրամանատար, կապիտան Արմեն Հայրիևը և ուրիշներ։ Դնեպրի գետանցման և Կիրովոգրադ քաղաքի ազատագրման մարտերին գործուն մասնակցություն ցուցաբերելու համար Կիրովոգրադյան պատվավոր անունը շնորհվեց Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիային։

Կովկասի ճակատամարտի հաղթական ավարտից և Ձախափնյա Ուկրաինայի ազատագրումից հետո 1943 թ. հոկտեմբերից մինչև 1944 թ. մայիսի 12-ը ազատագրվեցին Կերչ և Ղրիմ թերակղզիները։ Հիշատակության է արժանի Կերչ-Էլտիգենյան դեսանտային գործողությունը (1943 թ. հոկտեմբերի 31—դեկտեմբերի 11), որի հետևանքով կարևոր հենակետ գրավվեց Էլտիգենի շրջանում՝ մեծապես նպաստելով Կերչ, ապա Ղրիմ թերակղզիների ազատագրմանը։ Դեսանտային այս գործողության ընթացքում կատարած սխրանքների համար Լենինի շքանշանով պարգևատրվեցին 18-րդ բանակի 195-րդ գվարդիական ականանետային գնդի հրամանատար, փոխգնդապետ Քրիստափոր Իվանյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), 318-րդ լեռնահրաձգային դիվիզիայի դատախազ, իրավաբանության մայոր Արտավազդ

40 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686043, գ. 38, թ. 226։

41 Նույն տեղում, ց. 793756, գ. 4, թ. 2, գ. 20, թ. 86, 252, գ. 13, թ. 92։

42 Նույն տեղում, միկրոժապավեն թիվ 46/4595, տուփ 4, թ. 159—160։

Ֆրանգուլովը, նույն դիվիզիայի 1337-րդ գնդի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Շմավոն Պատվականյանը, նույն գնդի վաշտի ավագ Մկրտիչ Աղաշանյանը, 1339-րդ գնդի ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Յիդան Տոնոյանը և 32-րդ զվարդիական հրաձգային դիվիզիայի 80-րդ զվարդիական հրաձգային գնդի 3-րդ գումարտակի խուսկազմակերպիչ, զվարդիայի ավագ լեյտենանտ Մկրտիչ Տիգրանյանը[43]։

Ղրիմի ազատագրման մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 10 հայորդիների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ Նրանցից 5-ը Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի զինվորներ ու սպաներ էին։ Դիվիզիան Կերչի և Ղրիմի ազատագրման համար մղված կռիվներում նոր փառքով օծեց իր մարտական դրոշները՝ արժանանալով Կարմիր աստղի և Խարմիր դրոշի շքանշանների, իսկ նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց Սևաստոպոլյան պատվանունը[44]։

Ղրիմի ազատագրումից հետո և Աջափնյա Ուկրաինայի համար մղված մարտերին զուգընթաց, 1944 թ. հունիսի 23-ից մինչև օգոստոսի 29-ը իրագործված Բելոռուսական մարտական գործողության հետևանքով ազատագրվեց Բելոռուսիան։ Այն իրականացրին 1-ին Մերձբալթյան, 1-ին, 2-րդ և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերը։ Այս չորս ռազմաճակատների զորամիավորումների շարքերում մարտնչում էին մի քանի հազար հայ ռազմիկներ, սպաներ ու գեներալներ։ Նրանց թվում էր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հովհաննես Բագրամյանը, որը գերմանաֆաշիստական Գորոդոկյան և Վիտեբսկյան խմբավորումների շրջապատման ու ոչնչացման գործողությունը փայլուն կերպով իրագործելու համար 1944 թ. հուլիսի 29-ին արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման։ Հայրենիքի այդ բարձր կոչմանն արժանացան ևս 8 հայորդիներ[45]։ Բելոռուսիայի ազատագրման ակտիվ մասնակիցներից էին՝ 1-ին Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Դալաշևը, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ Կազբինցևը, 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի սանիտարական վարչության պետ, բժշկական ծառայության գեներալ-մայոր Ավետիք Բուռնազյանը, 49-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Ստեփան Կինոսյանը, 11-րդ զվարդիական հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Բագրատ Առուշանյանը, 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, 290-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Իսահակ Գասպարյանը, 18-րդ զվարդիական հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սմբատ Դանիելյանը, 146-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ներսես Բալոյանը և ուրիշներ, որոնք ֆաշիզմի լծից եղբայրական բելոռուս ժողովրդի ազատագրման գործում իրենց անձնվեր պայքարով էլ ավելի ամրապնդեցին հայ և բելոռուս ժողովուրդների բարեկամությունը[46]։

Արևմտյան Դվինան գետանցելու, Վիտեբսկի մարզում գերմանաֆաշիստական խոշոր զորախմբի շրջապատման և ջախջախման, ինչպես նաև Պոլոցկ քաղաքի ազատագրման մարտերում աչքի ընկնելու համար ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի՝ 1944 թ. հուլիսի 10-ի հրամանով Վիտեբսկյան պատվանունն է շնորհվում 51-րդ զվարդիական (նախկին՝ Հայկական 76-րդ)

---

43 ЦАМО РФ. ф. 33, оп. 686043, д. 42. л. 97. 98. 158, 177.

44 Հայկական 89-րդ Թամանյան հռակի շքանշանակիր դիվիզիայի մարտական ուղին 1942—1945 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1985, էջ 319, 330—331։

45 ЦАМО РФ. ф. 33, оп. 793756, д. 8, л. 76; д. 20. л. 373—376; д. 42, л. 203, л. 43. л. 263 և այլն:

46 Ավելի մանրամասն տե՛ս Ե. Մ. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Երևան, 1975։

հրաձգային դիվիզիային, իսկ հուլիսի 23-ի հրամանով, Պոլոցկյան՝ միավորման երեք հրաձգային գնդերին[46]։

Բելոռուսիայի ազատագրման մարտերում 51-րդ գվարդիական դիվիզիային զգալի աջակցություն ցույց տվեց սփյուռքահայության հանգանակած միջոցների հաշվին ստեղծված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը 119-րդ տանկային գնդի կազմում մասնակցեց Պոլոցկի ազատագրմանը և 1944 թ. հուլիսի 23-ին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։ Տանկային շարասյունը դիվիզիային աջակցեց նաև Մերձբալթիկայի ազատագրման մարտերում։

Հայրենական մեծ պատերազմի պատմության տարեգրության մեջ բեկումնային նշանակություն ունեցավ Լենինգրադի համար մղված ճակատամարտը, որը տևեց 1941 թ. հուլիսի 10-ից մինչև 1944 թ. օգոստոսի 9-ը՝ շուրջ 900 օր։ Լրիվ շրջափակման մեջ գտնվող հերոս քաղաքը ոչ միայն դիմացավ սովին, ցրտին և անընդհատ ռմբակոծություններին, այլև կարողացավ հավաքել ուժերը ճեղքել պաշարումը, ապա կործանիչ հարվածներով ջախջախել թշնամուն։ Այդ հերոսամարտերին Հյուսիսային, Հյուսիս-արևմտյան, Լենինգրադյան, Վոլխովյան, Կարելյան, 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատների և կարմրադրոշ Բալթյան նավատորմի շարքերում մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները։ Նրանցից առավել քաջերի ընկած 4 հայորդու և մեկ ռուս հայաստանցու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ Նրանց թվում էին՝ Հյուսիս-արևմտյան ուղղության ռազմաօդային ուժերի 38-րդ կործանիչ ավիադիվիզիայի կոմիսար, ապա հրամանատար, գումարտակային կոմիսար Ղազար Ջափարովը[48] Լենինգրադյան ռազմաճակատի 42-րդ բանակի 220-րդ առանձին տանկային բրիգադի 84-րդ տանկային գումարտակի տանկի հրամանատար, լեյտենանտ Ալեքսանդր Մնացականյանը[49], կարմրադրոշ Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 8-րդ ավիաբրիգադի 57-րդ ավիագնդի 3-րդ ավիաէսկադրիլիայի գրոհային ավիաօդաչուի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանը[50] (վերջինս այդ բարձր կոչման արժանացավ կրկնակի անգամ)[51], նույն գնդի 2-րդ ավիաէսկադրիլիայի հրամանատարի տեղակալ, ավագ լեյտենանտ Եֆիմ Ուդալցովը[52] (Գուգարքի շրջանի Ֆիոլետովո գյուղից)։ Հետագայում Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց նաև Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովին, որը պատերազմի սկզբին լինելով ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի 1-ին տեղակալ, գլխավոր ծովային շտաբի պետ, 1941 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին միաժամանակ Հյուսիս-արևմտյան ուղղության զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալն էր, ռազմական խորհրդի անդամ և պատասխանատու էր Բալթյան նավատորմի ու Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի փոխգործողությունների համար[53]։

Դեռևս Բելոռուսական գործողության ժամանակ 1-ին և 2-րդ Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերը, ազատագրելով Բելոռուսիան, մտան Լիտվա և Լատվիա։ Լենինգրադի համար մղված ճակա-

---

47 Կ. Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 122։

48 ЦАМО РФ, ф. 33, оп. 793756. д. 53, л. 17—19. (Ղ. Ա. Ջափարովը պարգևատրվեց նաև Լենինի և Կարմիր աստղի շքանշաններով)։

49 Նույն տեղում, ֆ. 33, ց. 793756, գ. 32, թ. 16 (1968 թ. Ա. Ս. Մնացականյանին շնորհվել է փեներալ-մայորի կոչում)։

50 Архив военно-морского флота РФ, ф. 3.

51 Նույն տեղում, ց. 2422, գ. 11, թթ. 184—187 (Ն. Գ. Ստեփանյանը պարգևատրվեց նաև Լենինի և Կարմիր դրոշի երեք շքանշաններով)։

52 Նույն տեղում, թ. 204—207։

53 Книга о героях, Ереван, 1985. с. 218—219.

տամարտը ավարտելուց հետո նրանց օգնության հասան Լենինգրադյան և 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատների զորքերը և Բալթյան նավատորմը, որոնք մարտեր սկսեցին Էստոնիայի տարածքում։ Այդ հինգ ռազմաճակատների ու Բալթյան նավատորմի համատեղ ուժերով 1944 թ. սեպտեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 24-ը իրագործվեց Մերձբալթյան գործողությունը, որի հետևանքով Էստոնիան, Լիտվան և Լատվիան (բացառությամբ Կուրլանդական թերակղզու) մաքրվեցին ֆաշիստական զավթիչներից։ Այդ մարտերում դարձյալ իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին հայ ժողովրդի զավակները։ Նրանցից մեկին՝ 179-րդ հրաձգային դիվիզիայի 259-րդ հրաձգային գնդի հաստոցային գնդացրի հաշվարկի հրամանատար, սերժանտ Վաչագան Վանցյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում (հետմահու)։ Լիբավայի ծովածոցի շրջանում (Լիեպայա քաղաքի մոտ, Լատվիա) տեղի ունեցած օդային մարտում հերոսի մահով զոհվեց լեգենդար օդաչու, Խորհրդային Միության կրկնակի հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը։ 67-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 138-րդ գվարդիական հրետանային գնդի հրանոթի հաշվարկի հրամանատար, ավագ սերժանտ Խաչիկ Մերիքսեթյանը, 154-րդ հրաձգային դիվիզիայի 473-րդ հրաձգային գնդի դատակի հրամանատարի օգնական, սերժանտ Նարիբեկ Ավետիսյանը և 182-րդ հրաձգային դիվիզիայի 140-րդ հրաձգային գնդի տակրավոր սերժանտ Գևորգ Ասրայելյանը դարձան Փառքի շքանշանի երեք աստիճանների լրիվ ասպետ։

Մերձբալթյան երկրների ազատագրման մարտերում կրկին իրենց ռազմավարական ունակություններով աչքի ընկան՝ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանը, 90-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Հայկ Մարտիրոսյանը, 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, 338-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Համայակ Բոբայանը, 146-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը, 18-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սմբատ Դանիելյանը, 1-ին հրաձգային կորպուսի հրետանու հրամանատար, գեներալ-մայոր Կարապետ Հախնազարյանը՝ արժանանալով կառավարական պարգևների։

1944 թ. օգոստոսից մինչև 1945 թ. մայիսի 9-ը Խորհրդային բանակի զորքերը մարտական գործողություններ էին վարում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տարածքներում՝ մեկը մյուսի հետևից ֆաշիզմի լծից ազատագրելով Լեհաստանը, Ռումինիան, Չարավսլավիան, Հունգարիան, Ավստրիան և Չեխոսլովակիան։ 1945 թ. մայիսի 2-ին գրավվեց ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը, իսկ մայիսի 8-ին նրա Կարլսհորստ արվարձանում Խորհրդային գերագույն գլխավոր հրամանատարության, Դաշնակից երկրների գլխավոր հրամանատարության ներկայացուցիչների և ռեյխստագական գերագույն հրամանատարության միջև կնքվեց ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերի անվերապահ անձնատրության մասին ակտը, որի համաձայն, մայիսի 9-ի առավոտյան ժամը 1-ից (Մոսկվայի ժամանակով) դադարեցվեցին պատերազմական բոլոր գործողությունները՝ դամաքում, ծովում և օդում, գերմանաֆաշիստական զորքերը վայր դրեցին իրենց զենքերը հաղթողների առջև։ Դրանով ավարտվեց Հայրենական մեծ պատերազմի երրորդ՝ հաղթական շրջանը։ Պատերազմի հաղթական շրջանի այդ մարտերին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ Ուկրաինական և 1-ին, 2-րդ, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերի, Բալթյան և Սևծովյան նավատորմերի շարքերում մասնակցեցին տասնյակ հազարավոր հայեր։ Նրանցից 35-ին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, որոնցից 17-ը՝ Լեհաստանի, 1-ը՝ Ռումինիայի, 1-ը՝ Չարավսլավիայի, 2-ը՝ Հունգարիայի, 1-ը՝ Չեխոսլովակիայի ազատագրման և 13-ը՝ Գերմանիայում տեղի ունեցած մարտերում ցուցաբերած սխրանքների համար։

Պատերազմի հաղթական ավարտի մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար 23 հայորդիներ պարգևատրվեցին Փառքի շքանշանի 1-ին աստիճանի շքանշանով՝ դառնալով զինվորական փառքի այդ շքանշանի լրիվ ասպետ։ Նրանցից 17-ը այդ շքանշանին արժանացան Գերմանիայի (այդ թվում Արևելյան Պրուսիայի), 4-ը՝ Լեհաստանի, 2-ը՝ Չեխոսլովակիայի և Ավստրիայի տարածքներում իրագործված մարտական գործողությունների ժամանակ կատարած սխրանքների համար։

Վերոհիշյալ մարտերին գործուն մասնակցություն ունեցան հայկական երկու ազգային դիվիզիաներ։ Նրանցից 89-րդ Թամանյան Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանակիր դիվիզիան աչքի ընկավ Լեհաստանի ազատագրման և հատկապես Գերմանիայի Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի և Բեռլինի գրավման մարտերում՝ արժանանալով Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանի։ Գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի փառապանծ միավորման 400-րդ Սևաստոպոլյան հրաձգային կորպուսի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատար, մայոր Հրանտ Բաբայանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, իսկ 8 ռազմիկներ պարգևատրվեցին Փառքի 1-ին աստիճանի շքանշանով՝ դառնալով Փառքի շքանշանի լրիվ ասպետ[54]։

Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերում փառաբանվեց Հայկական 409-րդ Կիրովոգրադյան Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր հրաձգային դիվիզիան, որին 1945 թ. ապրիլի 4-ին Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան ազատագրելու համար շնորհվեց Բրատիսլավյան պատվավոր անուն[55]։

Հայ ժողովրդի զավակները ակտիվորեն մասնակցեցին նաև Հեռավոր Արևելքում միլիտարիստական Ճապոնիայի Կվանտունյան միլիոնանոց բանակի ջախջախմանը, որը տեղի ունեցավ 1945 թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը։ Նրանք Անդրբայկալյան, Հեռավոր-արևելյան 1-ին և 2-րդ ռազմաճակատների, ինչպես նաև Խաղաղօվկիանոսյան նավատորմի շարքերում մասնակցեցին Հյուսիս-արևելյան Չինաստանի, Հյուսիսային Կորեայի, Հարավային Մախալինի և Կուրիլյան կղզիների ազատագրման մարտերին։ Կվանտունյան բանակի ջախջախման գործում կարևոր դեր խաղացին Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ և 10-րդ օդային բանակները, որոնցից առաջինի հրամանատարը ավիացիայի մարշալ Ամենակ Խանփերյանցն էր, իսկ երկրորդ հրամանատարի տեղակալը՝ ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տոլմաչևը. վերջինս 10-րդ օդային բանակի թիկունքի աշխատանքները լավ կազմակերպելու համար պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[56]։ 1-ին Հեռավոր-արևելյան ռազմաճակատի 5-րդ բանակի 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը՝ Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանն էր, որի միավորումը հատկապես աչքի ընկավ Մանջուրիայում՝ Մուդանցզյանի ուղղությամբ իրագործված հարձակողական գործողություն ընթացքում։ Նրա դիվիզիան բանակի առաջապահում գետանցեց Ուսսուրին, հաղթահարեց դժվարամատչելի Խինգանի բարձրավանդակը, ազատագրեց Գիրին, Չանչուն, Խարբին չինական քաղաքները։ Ղազարյանը նշանակվեց Խարբինի պարետ։ Մարտերի ընթացքում դիվիզիայի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ Ղազարյանը պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով[57]։

Ճապոնական միլիտարիստների ջախջախման մարտերին ակտիվորեն մասնակցեցին նաև՝ Հեռավոր-արևելյան 2-րդ ռազմաճակատի հրետանու

---

54 Հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր դիվիզիայի մարտական ուղին 1942—1945 թթ., էջ 686—687։

55 Կ. Ա. Հարությունյան, Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում 1944—1945 թթ., Երևան, 1982, էջ 96։

56 ЦАМО РФ, ф. 33, оп. 686196, д. 7745, л. 156.

57 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686196, գ. 7745, թ. 68։

հրամանատար, խորհրդային Միության հերոս, գեներալ-գնդապետ Միքայել Պարսեղովը, 6-րդ գվարդիական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը, 84-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Տիմոֆեյ Դեդեօղլյանը, 361-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Առաքել Օղանեղովը, 39-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետ, փոխգնդապետ (հետագայում՝ հրետանու գեներալ-մայոր) Դավրիլ Կամոևը, Մերձծովյան բանակի հակաօդային պաշտպանության պետ, հրետանու գեներալ-մայոր Գևորգ Չայլախյանը, 213-րդ բանակային թնդանոթային-հրետանային բրիգադի հրամանատար, գնդապետ Ռաֆայել Հայրապետովը, 56-րդ ծանր ականանետային բրիգադի հրամանատար, գնդապետ Սամվել Հարությունյանը, 72-րդ ծովային հետևակի բրիգադի հրամանատար, գնդապետ Բագրատ Սիտոյանը և շատ ուրիշներ։

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև թշնամու թիկունքում մարտնչող պարտիզանները, որոնց մեջ քիչ չէին նաև հայ ժողովրդի զավակները։ Այսպես, Ուկրաինայում գործող լեգենդար Կովպակի միավորման կազմում մարտնչել է «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանցի, Նաումովի միավորման կազմում՝ 250 հոգուց բաղկացած Ա. Ի. Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի, Բելոռուսիայում՝ Չապաևի անվան բրիգադը՝ Խաչիկ Մաթեոսյանի, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ Գերմանի անվան պարտիզանական բրիգադի 80 հոգիանոց 41-րդ ջոկատը՝ Արտյոմ Սաղումյանի, Ղրիմում գործող թիվ 10-րդ պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանի Ստ. Շահումյանի անվան ջոկատը՝ Անդրանիկ Մալխասյանի, ապա Միսաք Փարթալյանի, Լիտվայում գործող ջոկատը՝ Աշոտ (Նիկոլայ) Սարաբյանի, Ֆրանսիայում խորհրդային 1200 ռազմաղերիներից կազմված պարտիզանական գունդը՝ Ալեքսանդր Ղազարյանի, Հունգարիայում 1000 հայերից կազմավորված «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի գլխավորությամբ և այլն։ Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից էին՝ Հենրիկ Ջաքարյանը, Վահան Գրիգորյանը, Վահան Աղաջանյանը (Բելոռուսիա), Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետովը (Ղրիմ), Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ Գեորգի Հարությունյանցը և Մայա Փեհլիվանյանը, Սուխարիչ Հարությունյանը, Հովհաննես Պետոյանը (Ուկրաինա), Արտեմ Պետրոսյանը, Հակոբ Իլիկյանը, Արթուր Բաբայանը (Չեխոսլովակիա), Հենրիկ Թումանյանը, Սերգեյ Կուսիկյանը, Արարատ Նավոյանը (Լեհաստան), Գևորգ Քոլոզյանը, Մկրտիչ Դաշտոյանը, Մխիթար Գրիգորյանը (Իտալիա), Գրիգոր Միրզախանյանը, Անդրանիկ Միրզոյանը, Տիգրան Ալիխանյանը, Համայակ Բաղալյանը (Հոլանդիա), Բարթուղ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը, Ստեփան Ցաղջյանը (Ֆրանսիա) և ուրիշներ[58]։

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր ծանրակշիռ ավանդը ներդրեց նաև սփյուռքահայությունը։ Պատերազմի տարիներին նրա ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի Մայր հայրենիքը և

58 Հայ պարտիզանների մասին ավելի մանրամասն տե՛ս Ե. Մ. Խալեյան, նշվ. աշխ., նույնի՝ Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից, Երևան, 1981, նույնի՝ Թշնամու թիկունքում, Երևան, 1990, Վ. Ն. Ղազարեցյան, Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Երևան, 1965, նույնի՝ Հայ ժողովրդի մասնակցությունը սովետակա՛ վրիժառուների պայքարին Հայրենական մեծ պատերազմի տարիներին (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, № 2, էջ 3—16), Մ. Գ. Սահակյան, Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում, Երևան, 1981, նույնի՝ Սովետական ռազմիկների մարտական եղբայրությունը Լենինգրադի համար մղված մարտերում, Երևան, 1986 և այլն։

համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների մեջ։ Սփյուռքի հայերը նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տվեցին մարտնչող խորհրդային հայրենիքին։ Ինչպես արդեն նշեցինք, 1944 թ. փետրվարին Առաջին Ուկրաինական ռազմաճակատի 119-րդ առանձին տանկային գնդի կազմում մարտերի մեջ ստավ սփյուռքահայերի հանգանակությամբ կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։ Իրանահայերը միջոցներ հավաքեցին «Դեներալ Բաղրամյան» տանկային շարասյան համար։ Հազարավոր սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են նաև զենքը ձեռքներին։ Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են 20 հազար հայորդիներ։ Նրանցից լեյտենանտ Օրվանդ Դերվիշյանը արժանացավ Ամերիկայի հերոսի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի, որով պատերազմի տարիներին ԱՄՆ-ի բանակում պարգևատրվել է ընդամենը 87 մարդ[59]։ Շուրջ 30 հազար հայ ռազմիկներ կային Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի բանակներում, որոնք զորակոչվել էին Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից։ Հազարավոր հայեր ընդգրկված էին դիմադրական-պարտիզանական պայքարում։ Իր անմար սխրանքով հռչակվեց Միսաք Մանուշյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի ազգային հերոսի կոչման, հանուն Ֆրանսիայի ազատության իրենց կյանքը զոհեցին հայ ժողովրդի անվեհեր զավակներ Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները։ Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում և դիմադրության պայքարում։ Նրանց թվում էին Անդրանիկ և Օրվանդ Ղուկասյանները, Վահրամ Սաքանյանը, Սիլվեստրո Ղալեյանը և ուրիշներ։ Ամբողջ Բուլղարիայով մեկ թնդաց հերոսուհի պարտիզան Սաշկայի (Հերմինե Իազգրադյան) անունը, որին ֆաշիստները ենթարկեցին անմարդկային տանջանքների։ Վառնայում գնդակահարվեցին և ծովը նետվեցին Կարապետ Խաչատրյանը, Հարություն Պողոսյանը, Հակոբ Պարոնյանը և ուրիշներ։ Հարավսլավիայում պարտիզանների մեջ հռչակված հերոսներից էր Վարդուշ Սուքիասյանը (Սուքիասիչ)։

Այսպիսով, ընդհանուր կողմերով ներկայացնելով Խորհրդային Միության 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը, գալիս ենք այն եզրակացության, որ ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ միասին՝ ռուս ժողովրդի գլխավորությամբ, հայ ժողովուրդը ևս ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման և նրանց նկատմամբ տարած պատմական նշանակություն ունեցող հաղթանակի գործում։ Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է ավելի քան 500 հազար հայ զինվոր, տպա և գեներալ, որոնցից շուրջ 200 հազարը զոհվել են մարտերում։ Նրանցից շուրջ 70000-ը պարգևատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով[60]։ Մարտերում առավել աչքի ընկած 104 հայերի և Հայաստանում ծնված այլ ազգության ներկայացուցիչների 10 հոգու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում[61]։ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և գվար-

---

59 Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, Երևան, 1970, էջ 160։

60 ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության գլխավոր կադրերի վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմի տարիներին շքանշաններով ու մեդալներով են պարգևատրվել 9284199 մարդ, որոնց թվում ռուսներ՝ 6172976, ուկրաինացիներ՝ 1710766, բելոռուսներ՝ 311105, թաթարներ՝ 174886, հրեաներ՝ 160772, ղազախներ՝ 96638, ուզբեկներ՝ 80013, հայեր՝ 66802, վրացիներ՝ 49106, ադրբեջանցիներ՝ 36180 և այլն)։ Красная звезда, 28. III. 1967.

61 Книга о героях աշխատության մեջ հերոսների ընդհանուր թիվը 108 է։ Մենք դրան ավելացրել ենք Վլադիմիր Գրիգորի Թամրյանի (Տամրիև)՝ ազգությամբ հայ և Լենինականում ծնված, ազգությամբ ռուս Վալենտին Գեորգիևիչ Կոլլովի անունները (տե՛ս Герой Советского Союза, т. 1, М., 1987, с. 685, т. 2, М., 1988, с. 556), ինչպես նաև ավագ լեյտենանտներ Արտաշես Քրիստափորի Հարությունյանի, եգեն Հակորի Փիլոսյանի,

դիայի փոխգնդապետ, լեգենդար օդաչու Նեսլոն Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի։ 27 հայ ռազմիկներ, պարգևատրվելով Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով՝ դարձել են զինվորական Փառքի այդ շքանշանի լրիվ ասպետներ, որոնց իրավունքները հավասարեցվել են Խորհրդային Միության հերոսի կոչում ունեցողներին։ Պատերազմի տարիներին 12 հայորդիների շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Մարտերում արտակարգ սխրանքներ կատարած և զոհված 6 հայ զինվորի ու սպայի անուններ առհավետ գրանցվել են նրան ստորաբաժանումների անձնակազմերի ցուցակներում, որտեղ նրանք ծառայել են։ 1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 60 հայ գեներալ, ավիացիայի մեկ մարշալ, մեկ ծովակալ։ Հետպատերազմյան տարիներին հայ գեներալների թիվը անցել է 130-ից։ Պատերազմի մասնակիցներից Հովհաննես Բաղրամյանին 1955 թ. շնորհվեց է Խորհրդային Միության մարշալի կոչում։ Նույն թվականին Խորհրդային Միության ծովակալի կոչում է շնորհվել Հովհաննես Իսակովին։ 1975 թ. Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Համազասպ Բաբաջանյանին, իսկ 1980 թ. ինժեներական զորքերի մարշալի կոչում՝ Սերգեյ Քրիստափորի Աղանովին, որը պատերազմի տարիներին սակրային վաշտի հրամանատարից հասել էր բանակի ինժեներական զորքերի շտաբի պետի պաշտոնի[62]։

Հետպատերազմյան տարիներին փոխ-ծովակալի կոչում է շնորհվել պատերազմի մասնակից 4, իսկ փոխծովակալի կոչում՝ 5 հայորդիների։ Պատերազմի տարիներին հայ զորավարներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 5-ը. կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի հրամանատար։ Հայ գեներալներից 3-ը եղել են ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ, 2-ը՝ ռազմաճակատի հրետանու հրամանատար, 3-ը՝ ռազմաճակատի զանազան վարչությունների պետեր։ 25 հայորդիներ եղել են բրիգադների, իսկ շուրջ 100-ը՝ գնդերի հրամանատար։ Հայ ժողովրդի զավակները մարտնչել են բոլոր ռազմաճակատներում և տարբեր զորատեսակների կազմերում. հետեվակայիններ, օդաչուներ, տանկիստներ, հրետանավորներ, սակրավորներ, կապավորներ, ծովայիններ և այլն։ Ռազմաճակատի որ մասում էլ նրանք մարտնչեին, լիներ դա Անդրբևեռ թե Հեռավոր Արևելք, Մերձբալթիկա թե Ուկրաինա, Բելոռուսիա, Ռուսաստան թե եվրոպական երկրներ, ամենուրեք բարձր են պահել հայ ժողովրդի պատիվը, հարստացրել նրա մարտական վառապանծ ավանդույթները և իրենց արժանի ավանդը ներդրել աշխարհի առաջադեմ մարդկության ոխերիմ թշնամի ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակում։

յեյտենանտ Գրիգոր Աղասու Փալանջյանի և Կրասնոսելսկում ծնված Իվան Իվանովիչ Սեմյոնովի անունները, որոնց շնորհվել է հերոսի կոչում, սակայն հետպատերազմյան տարիներին դատվելու հետևանքով զրկվել են մարտերում վաստակած կոչումից։ 1986 թ. փետրվարի 14-ին Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել փրկարար արշավախմբի պետ Արթուր Նիկոլայի Զիլինգարովին, 1984 թ. մայիսի 28-ին՝ Գ. Ա. Վարդանովին, իսկ 1991 թ. հունվարի 24-ին՝ Գուրգեն Ռուբենի Կարապետյանին։ Այսպիսով, հայ և Հայաստանում ծնված այլազգի Խորհրդային Միության հերոսների ընդհանուր թիվը հասնում է 117-ի, որից հայեր՝ 107։ Նրանցից 4 հոգու հերոսի կոչում է շնորհվել 1939—1940 թթ. Խորհրդա-ֆիննական պատերազմում, իսկ 4-ին՝ հետպատերազմյան տարիներին կատարած ծառայությունների համար։ 1995 թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության հերոսի կոչում շնորհվեց տանկիստ Սուրեն Համբարձումի Թաշչիեին։

62 Военный энциклопедический словарь, М., 1984, с. 20; Военно-исторический журнал, 1987, № 6, с. 84—86.

УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941—1945 ГГ.)

К. А. АРУТЮНЯН

Резюме

Армянский народ вместе с другими народами СССР активно участвовал в Великой Отечественной войне. Более 500 тыс. армян с честью выполнили свой долг на фронте. Из них около 200 тыс. погибли на войне. 70 тыс. воинов-армян были награждены боевыми орденами и медалями. 117 армян и представителей других национальностей, проживающих на территории Армении, стали Героями Советского Союза. Из них 4—в Советско-финской войне, 109—в Великой Отечественной, 4 были награждены за подвиги в послевоенный период. 107 из них — армяне. Маршал Советского Союза И. Х. Баграмян и летчик Н. Г. Степанян этого высокого звания были удостоены дважды. 27 воинов-армян стали полными кавалерами ордена Славы. 12 армянам в годы войны было присвоено звание Героя социалистического труда. В блестящей плеяде советских полководцев вместе с И. Х. Баграмяном достойное место заняли адмирал флота Советского Союза, Герой Советского Союза И. С. Исаков, маршал авиации А. А. Ханферянц (С. А. Худяков), главный маршал бронетанковых войск, Герой Советского Союза А. Х. Бабаджанян. В годы войны 60 армян стали генералами, а после войны этого полководческого звания были удостоены еще 40 участников войны. 10 армян-моряков стали адмиралами: из них 1—адмирал флота Советского Союза, 4—вице-адмиралами, 5—контрадмиралами.

Армяне принимали активное участие и в партизанской борьбе на территории Украины, Белоруссии, РСФСР и республик Прибалтики, а также в антифашистском движении Сопротивления народов Европы. Достойную лепту в дело победы внесли и трудящиеся Армении.